

ՓՈՒՆԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության միջև մաքսային համագործակցության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչությունը և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայությունը, այսուհետ՝ Կողմեր,

ելնելով երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունների զարգացման և ամրապնդման անհրաժեշտությունից, հիմք ընդունելով երկու երկրների շահերը, ցանկանալով զարգացնել մաքսային համագործակցությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Նկատի ունենալով առևտրի զարգացման կարևորությունը և Արաքս գետի վրա համատեղ կառուցված կամրջի ավարտը՝ Կողմերը միջոցներ կձեռնարկեն մաքսային համալիրների շինարարությունը ավարտելու և ենթակառուցյունները ընդլայնելու ուղղությամբ՝ առևտրի և ուղևորների համար ներդաշնակ պայմաններ ու մաքսային դյուրություններ ստեղծելու նպատակով:

Հոդված 2

Կողմերը կփոխանակեն իրենց փորձը և տեղեկությունը երկու երկրների մաքսային օրենսդրության վերաբերյալ, հատկապես արտահանումների, ներմուծումների, տարանցիկ բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների բնագավառը կարգավորող այդ օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ:

Հոդված 3

Կողմերը կստեղծեն անհրաժեշտ դյուրին պայմաններ՝ երկու երկրների տարածքով տարանցիկ փոխադրումներն իրականացնելու համար:

Հոդված 4

Արգելվում է զենքի, զինամթերքի, թմրանյութերի, հոգեմեղման ընդհանուր և երկու երկրների օրենսդրություններով ներմուծման համար արգելված այլ ապրանքների տարանցիկ փոխադրումը, բացի այն դեպքերից, երբ երկու երկրների կառավարությունները համաձայնում են:

Արգելված ապրանքների ցանկը կփոխանակվի միմյանց միջև:

Հոդված 5

Կողմերը համաձայնեցին հայտնաբերված զենքի, զինամթերքի, թմրանյութերի և հոգեմեղման ընդհանուր և այդ առարկաներն ապօրինաբար փոխադրող անձանց մասին անհրաժեշտ տեղեկություններ փոխանակել միմյանց հետ:

Հոդված 6

Կողմերի տարածքով տարանցիկ փոխադրվող բեռների համար մաքսատուրք կամ այլ հարկ չի գանձվում: Գանձվում են միայն երկու երկրների օրենսդրությանը համապատասխան դրանց մաքսային ձևակերպումների համար վճարներ:

Այդ վճարների չափի և գանձման կարգի մասին Կողմերը տեղեկություններ կփոխանակեն:

Հոդված 7

Կողմերը միմյանց տարածքում գտնվող տարանցիկ փոխադրվող ապրանքների և փոխադրամիջոցների վաճառք կամ հանձնում չեն թույլատրում: Այս պայմանի խախտումն արձանագրելիս, խախտում արձանագրած երկրի օրենսդրությանը համապատասխան, գործողություններ կձեռնարկվեն, և այդ մասին տեղեկություններ կհաղորդվեն խախտում կատարած Կողմի համապատասխան կառավարական մարմիններին:

Հոդված 8

Ապրանքների տարանցիկ փոխադրումները արագացնելու և դժվարությունները հարթելու նպատակով Կողմերը կարող են ներկայացնել ապրանքների, ուղևորների, ներքին ու արտաքին տարանցիկ բեռների և փոխադրամիջոցների անցման համար մյուս Կողմում մեկ կամ մի քանի միջազգային տրանսպորտային կազմակերպությունների՝ որպես իր ներկայացուցիչ, որպեսզի կարողանան օգտագործել այդ ընկերությունների հնարավորությունները:

Հոդված 9

Ապրանքների տարանցիկ փոխադրումների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով Կողմերը համաձայնեցին միջոցներ ձեռնարկել, որպեսզի երկու երկրների տրանսպորտային ընկերությունները, որոնք զբաղվում են ապրանքների փոխադրմամբ, փոխադրամիջոցի վարորդին ապահովեն հետևյալ փաստաթղթերով՝ բեռնագիր, ապրանքագիր, փաթեթավորման թերթիկ, ապրանքի ծագման հավաստագիր և նշանակման երկիր, ապրանքատիրոջ անուն, միջազգայնորեն ճանաչված վարորդական իրավունք, ապահովագրական քարտ, փոխադրամիջոցի սեփականությունը հաստատող փաստաթուղթ:

Հոդված 10

Կողմերը համաձայնեցին, որ մի Կողմի տարածքով դեպի երրորդ երկիր տարանցիկ փոխադրվող ապրանքի, այն տեղափոխող փոխադրամիջոցի ծածկապաստառի և կապարակնիքների անվնասության պահպանվածության դեպքում մաքսային ստուգման արարողությունը հիմնականում սահմանափակվում է փոխադրամիջոցի արտաքին զննմամբ և կրկնակի կապարակնիքմամբ: Ապրանք տեղափոխող փոխադրամիջոցի ծածկապաստառի կամ կապարակնիքների վնասվածության դեպքում յուրաքանչյուր Կողմի մաքսային մարմին գործելու է ըստ իր երկրի օրենսդրության:

Հոդված 11

Կողմերը ճանաչում են միմյանց մաքսային փաստաթղթերը, մաքսային կնիքները, կապարակնիքներն ու դրոշմակնիքները և սույն Հուշագիրը ստորագրելուց հետո ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում դրանց նմուշները ներկայացնում են միմյանց:

Հոդված 12

Եթե ապրանքներ և ուղևորներ փոխադրող փոխադրամիջոցները չունեն միջազգային անցումի փաստաթուղթ (ԿԱՌՆԵ ԴԸ ՓԱՍԱԺ), մի Կողմի փոխադրամիջոցների համար երաշխագնի փոխարեն մյուս Կողմը բավարար հիմք կհամարի պաշտոնական թույլտվություն ունեցող միջազգային որևէ բեռնափոխադրական ընկերության պաշտոնական երաշխավորությունը:

Հոդված 13

Կողմերը համաձայնեցին, որ միմյանց տարածքով տարանցիկ ուղևորություն կատարող քաղաքացիներից որևէ գանձում չի կատարվում: Սակայն նրանց ուղեկցող փոխադրամիջոցները, ձեռքի իրերը և առևտրային նշանակության ապրանքները ենթակա են մաքսային ընթացակարգին՝ Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 14

Կողմերը բեռնատար ավտոմեքենաների կուտակումները Արաքս գետի վրա կառուցված կամրջի մոտ բացառելու նպատակով պայմանավորվեցին այդ ավտոմեքենաների մաքսային հսկողությունն իրականացնել կամրջից բավարար հեռավորության վրա՝ արագ և կարճ ժամանակում:

Հոդված 15

Կողմերի սահմանային մաքսային կետերում աշխատանքները կազմակերպվում են շուրջօրյա՝ ներառյալ հանգստյան և տոնական օրերը, առանց աշխատանքների ընդհատման:

Հոդված 16

Կողմերի մաքսային ծառայությունների ղեկավար պաշտոնյաները հնարավոր դժվարությունները վերացնելու և աշխատանքների համակարգման նպատակով պարբերաբար տարին մեկ անգամ հանդիպում են Հայաստանում կամ Իրանում:

Տարածաշրջանային մաքսատների ղեկավարները հանդիպում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ, իսկ Մեղրիի և Նորդուզի մաքսային կետերի ղեկավարները՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ նախապես տեղեկացնելով միմյանց:

Հոդված 17

Սույն Հուշագրի կիրառման և մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են Կողմերի մաքսային ծառայությունների բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հուշագիրը կարող է լրացվել և փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 18

Սույն Հուշագրի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցնում են Կողմերի միջև կնքված.

ա) 1992 թվականի մայիսի 6-ի (համապատասխանաբար՝ 1371.02.16 Հեջրի Շ.) «Տարանցիկ, արտահանվող և ներմուծվող ապրանքների և ուղևորների երթևեկության մասին» Համաձայնագիրը,

բ) 1992 թվականի հունիսի 27-ի (համապատասխանաբար՝ 1371.04.07. Հեջրի Շ.) Արձանագրությունը,

գ) 1995 թվականի մայիսի 6-ի (համապատասխանաբար՝ 1374.02.16. Հեջրի Շ.) Փոխընթերցման հուշագիրը:

Սույն Փոխընթերցման հուշագիրը բաղկացած է 18 հոդվածներից, ստորագրվել է 1996 թվականի դեկտեմբերի 28-ին (համապատասխանաբար՝ 1375.10.08. Հեջրի Շ.), Երևան քաղաքում, երկու լեզվով՝ հայերեն և պարսկերեն, ընդ որում երկու բնօրինակներն էլ հավասարազոր են:

Սույն Փոխընթերցման հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հուշագիրն ուժի մեջ է մտել 1996 թվականի դեկտեմբերի 28-ից: